

կըսի.—ՄՏե՛ր, քիւ քեռիք յիւր ին.
 —Իս վէրու ուխչար առք, էկայ տուն.
 Իմ քեռիք, ընկեան իմ խոնէն էկին.
 Էկինք, է՛, էս տե, քեաղքը գըլեօխ.
 Միտ կէնին զվէրու ուխչար ձընէ խլէն.

Իս ինչ էրիմ, ձընէ չդագարան,
 Իսն էլ ամին մէկ մէ եան շփուտիմ.
 Զվէրու ուխչար առամ էկամ տուն:

349. Դաւիթ էսաց.—Վայ-վայ, ձեռ զարկից չուքը վերայ,
 Խանտիւթ, քիւ աղբէրքեր սպանիւր է:

Զէ՛, Դաւիթ զՄՏեր ճարպեր¹ ի, դտի, ինչքամ դախմ² է.
 Խանտիւթ չաւատաց.—էդա ճիժ ինչդ իմ աղբէրքեր

տսպանի:

Դաւիթ կըլնը կը վազնի դէմ ՄՏերի քեռիք.
 Խանտիւթն էլ Դաւթը խիտ կերթայ. որ կը մօտանայ,

կըսի.—Դաւիթ, կեօ իմ աղբէրքեր կը ծծղան:

Զէ՛ որ ՄՏեր զարկիւր է գետըն, գէարպեօլ է,
 Բերանքտիւր բացուիւր է, ատամքտիւր սպտակ կտան:

350. Խանտիւթ գըտի կը ծծղան. Դաւիթ շիւտ կը խասնի,
 Զեռ կը թլը վուր խուղէն դիւս քեշի.

Կը տխնայ մեռուկ է անիւր,

Որ կը թըլի, տիսնայ, յըմեն էլ մեռուկ է:

—Խանտիւթ, կըսի, շիւտ էրի, քիւ աղբէրքեր յըմեն մե-

ռած է:

Խանտիւթ կը խասնի, տիսնայ, աղբէրքեր յըմեն մեռած է.
 Ըդա կըլնըն կը դառնան տուն:

351. Դաւիթ կգեայ տուն, կը հանուտի ՄՏերի վերայ.
 Մէկ շամախ³ կը զարկի ՄՏերը յերսին, ՄՏերն է, ձէն չտայ,
 Մէկ էլ կը զարկի, էլի ձէն չտայ ՄՏեր:

Դաւիթ կըսի.—Իս իմ շամախ էրկըթէ թրին զարկէր,
 Շուռ կառնէր, էդա տնաւիւր ինչքան զաղմ է.

Կը հառտտի, մէկ շամախ էլ կը զարկի:

352. ՄՏեր կըսի.—Խէրի՛կ, մէկ քի խաթը, էրկուս քի
 խաթը, իրեքն էլ ինչ խաթը:

Կըռըկի, ձեռ կը թլի խէր.

Կը բռնը զխէրն, կը վերցի զարկի գետըն.

Խէր չեւը մէջք կընկնը, կերթայ խուղը մէջ.

Դաւիթ կանիծի.—Վայ ՄՏե՛ր,

1 Փորձի: 2 Թրք.—Ուժեղ: 3 Թրք. Շամախ.—Ապտակ: